Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-092-15.11.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «պալատի» բառից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ համապատասխան դատական կազմի» բառերով.

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Կոլեգիալ կազմով որոշումներն ընդունվում են դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Վճռաբեկ դատարանում որոշումներն ընդունվում են Վճռաբեկ դատարանի պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ համապատասխան դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով. «7. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում գործում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմեր՝ յուրաքանչյուրը 5 դատավորի թվակազմով, որոնք բողոքը քննելիս և որոշումներ ընդունելիս գործում են որպես Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ մասում «յուրաքանչուր պալատի» բառերից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ յուրաքանչյուր դատական կազմի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «երկու» բառը փոխարինել « չորս» բառով.

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Վճռաբեկ դատարանում գործում են՝

1) քրեական պալատը՝ 6 դատավորի թվակազմով.

2) քաղաքացիական պալատը՝ 7 դատավորի թվակազմով.

3) վարչական պալատը՝ 5 դատավորի թվակազմով:»»

4) հակակոռուպցիոն պալատը՝ 10 դատավորի թվակազմով:»:

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը «նիստերը» բառից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ այն դատական կազմի նիստերը, որում ընդգրկված է պալատի նախագահը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն.

«Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են նաեւ համապատասխան պալատի վերացման դեպքում:»:

Հոդված 6. Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով. «1.1. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բաշխվում են միայն կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորների միջև, իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բաշխվում են միայն հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների միջև:»:

Հոդված 7. Օրենքի 95-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 95. Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման մասին որոշումը**

1. Դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է ըստ քրեական, քաղաքացիական, վարչական եւ հակակոռուպցիոն մասնագիտացումների: Քաղաքացիական մասնագիտացման բաժնում ներառվում է նաեւ սնանկության մասնագիտացումը: Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ներառվում են

կոռուպցիոն հանցագործությունների քննության եւ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները:

2. Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը, համապատասխան մասնագիտացման դատավորների առկա եւ կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը եւ այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտության: Համալրումը կարող է իրականացվել համալրման ենթակա տեղերի քանակով՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում կամ առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:

3. Եթե դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական եւ քաղաքացիական մասնագիտացման բաժնում չի գերազանցում հաջորդ երկու տարում թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը չորսով, իսկ վարչական եւ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններում՝ երկուսով, ապա Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին: Նշված քանակի մեջ չեն հաշվարկվում դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված այն անձինք, որոնք իրենց նշանակման առաջարկության վերաբերյալ հայտնել են անհամաձայնություն հղիության եւ ծննդաբերության, նորածնի որդեգրման կամ նորածնի խնամակալ նշանակվելու հետ կապված արձակուրդում գտնվելու պատճառով: Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների քանակի հաշվարկը կատարվում է հաջորդ երկու տարվա ընթացքում քրեական եւ քաղաքացիական մասնագիտացման բաժիններում համալրման համար անհրաժեշտ քանակը յոթական թեկնածուով, իսկ վարչական եւ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններում՝ երկու թեկնածուով գերազանցող քանակի հաշվարկով:

4. Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի տեղեկություններ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների

ընդունման ժամկետները եւ վայրը: Համալրումը համալրման ենթակա տեղերի քանակով իրականացվելու դեպքում հայտարարությամբ նշվում է համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների:»:

Հոդված 8. Օրենքի 98-րդ հոդվածի 5-րդ մասում «123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում» բառերը փոխարինել «123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետում բառերով, իսկ «132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով» բառերը՝ «132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետով բառերով:

Հոդված 9. Օրենքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) գրավոր քննության հանրագումարային արդյունքներով անհրաժեշտ միավորները հավաքած հավակնորդների ցուցակից, իսկ եթե համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով՝ դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը համալրելու համար անհրաժեշտ թեկնածուների քանակը 50 տոկոսով, բայց ոչ պակաս, քան հինգով գերազանցող քանակի ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակից, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան քանակի հավակնորդ չի հավաքել անհրաժեշտ միավորները, եւ»:

Հոդված 10. Օրենքի 109-րդ հոդվածի 3-4-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է հավակնորդների թվին: Եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս հավակնորդների թիվն անհրաժեշտ քանակին հավասար կամ շատ լինելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է համալրման համար անհրաժեշտ քանակին, իսկ քիչ լինելու դեպքում՝ հավակնորդների թվին:

4. Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ, որում ընդգրկվում են՝

1) անհրաժեշտ քանակին հավասար քանակի առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած հավակնորդները, եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով.

2) Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած հավակնորդները, եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:»:

Հոդված 11. Օրենքի 112-րդ հոդվածի 1.2-րդ մասը «թեկնածուների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների թեկնածուների» բառերով:

Հոդված 12. Օրենքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) չորրորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին.

5) հինգերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին:»:

Հոդված 13. Օրենքի 116-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «4» թիվը փոխարինել «5» թվով.

2) 5-րդ եւ 6-րդ մասերում «5» թիվը փոխարինել «4» թվով:

Հոդված 14. Օրենքի 123-րդ հոդվածում՝

1) 1-3-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը, վերաքննիչ դատարանների առկա եւ կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը եւ այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության: Համալրումը կարող է իրականացվել համալրման ենթակա տեղերի քանակով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում կամ առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:

2. Եթե դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական, քաղաքացիական եւ վարչական մասնագիտացման բաժիններում չի գերազանցում հաջորդ երկու տարում վերաքննիչ դատարանների թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը, ապա Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը համալրման ենթակա տեղերի քանակով համալրելու անհրաժեշտության մասին: Նշված քանակի մեջ չեն հաշվարկվում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկված այն անձինք, որոնք իրենց նշանակման առաջարկության վերաբերյալ հայտնել են անհամաձայնություն եւ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով չեն հանվել դատավորների թեկնածուների ցուցակից:

3. Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի դիմումներն ընդունելու ժամկետը, վայրը: Համալրումը համալրման ենթակա տեղերի քանակով իրականացվելու դեպքում հայտարարությամբ նշվում է

համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների:»:

2) 4-5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

3) 6-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) այն անձը, որը

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն:».

4) 10-րդ մասում «անձը դիմումին կցում է» բառերը փոխարինել «անձինք դիմումին կցում են» բառերով, իսկ «փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «իսկ 3-րդ կետի «ա» ենթակետում նշված անձը նաև՝» բառերով:

Հոդված 15. Օրենքի 124-րդ հոդվածում՝

1) 5-6-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է թեկնածուների թվին: Եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս թեկնածուների թիվն անհրաժեշտ քանակին հավասար կամ շատ լինելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է համալրման համար անհրաժեշտ քանակին, իսկ քիչ լինելու դեպքում՝ թեկնածուների թվին:

6. Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կազմում է առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակ, որում ընդգրկվում են՝

1) անհրաժեշտ քանակին հավասար քանակի առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն

կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած թեկնածուները, եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով.

2) Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած թեկնածուները, եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:».

2) 10-րդ մասում՝

ա. հանել «մինչեւ օգոստոսի 1-ը, իսկ» բառերը.

բ. «բաժինն արտահերթ» բառերը փոխարինել «բաժինը» բառով:

Հոդված 16. Օրենքի 132-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) այն անձը, որը

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն:».

2) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություններ.

«Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր նշանակվելու համար սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նշված անձն իրավունք ունի ընդգրկվել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում, եթե հանդիսանում է քրեական մասնագիտացման կամ հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման դատավոր: Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավոր նշանակվելու համար սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նշված անձն իրավունք ունի ընդգրկվել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում, եթե հանդիսանում է քաղաքացիական մասնագիտացման դատավոր կամ հակակոռուպցիոն

դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման դատավոր:».

3) 6-րդ մասում «անձը դիմումից կցում է» բառերը փոխարինել «անձինք դիմումին կցում են» բառերով, իսկ «փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «իսկ 3-րդ կետի «ա» ենթակետում նշված անձը նաև՝» բառերով:

Հոդված 17. Օրենքի 149-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3.1-ին կետից հանել «հերթական եւ արտահերթ» բառերը.

2) 3-րդ մասից հանել «հերթական» բառը:

Հոդված 18. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտության եւ իրականացման կարգի մանրամասները՝ հաշվի առնելով սույն հոդվածի կարգավորումները:

3. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի (այսուհետ՝ Քաղաքացիական և վարչական պալատ) այն դատավորները, որոնք մինչեւ Վճռաբեկ դատարանում պաշտոնավարելը պաշտոնավարել են վարչական կամ վարչական վերաքննիչ դատարաններում, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհրդին գրավոր համաձայնություն ներկայացնելու դեպքում շարունակում են պաշտոնավարել Վճռաբեկ դատարանի վարչական պալատում (այսուհետ՝ Վարչական պալատ) այդ պալատի գործելուց հետո: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Քրեական պալատ) դատավորները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհրդին կարող են ներկայացնել գրավոր համաձայնություն Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն պալատ) կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմում իրենց պաշտոնավարումը շարունակելու համար: Բարձրագույն դատական խորհուրդը համաձայնությունները ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում նշված դատավորներից կարող է ընտրել երկու դատավոր

Հակակոռուպցիոն պալատում իրենց պաշտոնավորումը շարունակելու համար: Սույն մասով նախատեսված՝ գրավոր համաձայնություն ներկայացրած Քաղաքացիական և վարչական պալատի դատավորները մինչեւ Վարչական պալատի գործելը պաշտոնավարում են որպես Քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներ: Սույն մասով նախատեսված՝ Քրեական պալատի՝ գրավոր համաձայնություն ներկայացրած և Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված դատավորները մինչև Հակակոռուպցիոն պալատի գործելը պաշտոնավորում են որպես Քրեական պալատի դատավորներ:

4. Քաղաքացիական եւ վարչական պալատի այն դատավորները, որոնք չեն համապատասխանում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներին եւ այն դատավորները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներին, սակայն Վարչական պալատում պաշտոնավարելու վերաբերյալ գրավոր համաձայնություն չեն ներկայացնում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի (այսուհետ՝ Քաղաքացիական պալատ) եւ Վարչական պալատի գործելուց հետո շարունակում են պաշտոնավարել որպես Քաղաքացիական պալատի դատավորներ մինչեւ իրենց լիազորությունների ավարտը՝ անկախ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված թվակազմից: Հակակոռուպցիոն պալատում պաշտոնավորումը շարունակելու համար գրավոր համաձայնություն չներկայացրած, ինչպես նաև Հակակոռուպցիոն պալատում պաշտոնավորումը շարունակելու համար գրավոր համաձայնություն ներկայացրած, սակայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից չընտրված Քրեական պալատի դատավորները, շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ավարտը՝ անկախ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված թվակազմից:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերը լուծելու պահից՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հրապարակում է հայտարարություն համապատասխանաբար Վարչական և Հակակոռուպցիոն պալատներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Քաղաքացիական պալատում համալրման ենթակա տեղերի քանակի եւ համալրման կարգի վերաբերյալ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հայտարարությունը հրապարակելու պահից երկշաբաթյա ժամկետում Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձինք կարող են դիմում ներկայացնել Բարձրագույն դատական խորհուրդ՝ Վճռաբեկ

դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու նպատակով:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման նախապատրաստումը, ցուցակի կազմումը, հաստատումը եւ թեկնածուներին առաջարկության ներկայացումն իրականացվում է Օրենքի 132-րդ եւ 133-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

8. Քաղաքացիական եւ վարչական պալատը համարվում է վերացված, իսկ Քաղաքացիական եւ Վարչական պալատները գործում են Վարչական պալատում դատավորների բոլոր թափուր պաշտոնները համալրելու պահից եւ եթե Քաղաքացիական պալատում պաշտոնավարելու է առնվազն 5 դատավոր: Հակակոռուպցիոն պալատը գործում է պալատի յուրաքանչյուր դատական կազմի դատավորների առնվազն 3 թափուր պաշտոնները համալրելու պահից: Առաջխաղացման կարգով Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատի դատավոր նշանակված անձինք համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատի դատավորի պաշտոնը ստանձնում են պալատների գործելու պահից:

9. Սույն հոդվածի 8-րդ մասին համապատասխան Քաղաքացիական և վարչական պալատի վերացված համարվելու պահից պալատի նախագահի լիազորությունները դադարում են: Համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական եւ Հակակոռուպցիոն պալատների գործելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 134-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է համապատասխան պալատի նախագահի նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը:

10. Մինչեւ Քաղաքացիական եւ Վարչական պալատների գործելը շարունակում է գործել Քաղաքացիական եւ վարչական պալատը և վճռաբեկության կարգով քաղաքացիական եւ վարչական գործերի քննությունն իրականացվում է Քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից: Մինչեւ Հակակոռուպցիոն պալատի գործելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից, եթե Քաղաքացիական պալատը դեռևս չի գործում, իսկ Քաղաքացիական պալատի գործելուց հետո՝ Քաղաքացիական պալատի կողմից: Մինչեւ Հակակոռուպցիոն պալատի գործելը կոռուպցիոն հանցագործությունների

գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Քրեական պալատի կողմից:

11. Մինչեւ Քաղաքացիական, Վարչական եւ Հակակոռուպցիոն պալատների գործելը Քաղաքացիական եւ վարչական պալատի և Քրեական պալատի կողմից վարույթ ընդունված բողոքները համապատասխան պալատների գործելու պահից մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի պալատների միջև՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 10-րդ մասի կարգավորումները:

12. Մինչեւ համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատների գործելը ներկայացված վճռաբեկ բողոքները, որոնց վերաբերյալ չի կայացվել վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու, վերադարձնելու, վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում եւ որոնք չեն համապատասխանում տվյալ պալատի կողմից քննության ենթակա գործերի շրջանակին, մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների միջեւ:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում՝

4) 4-րդ մասում «պալատի» բառից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ համապատասխան դատական կազմի» բառերով.

5) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Կոլեգիալ կազմով որոշումներն ընդունվում են դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Վճռաբեկ դատարանում որոշումներն ընդունվում են Վճռաբեկ դատարանի պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ համապատասխան դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»:

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով. «7. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում գործում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմեր՝ յուրաքանչյուրը 5 դատավորի թվակազմով, որոնք բողոքը քննելիս և որոշումներ ընդունելիս գործում են որպես Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ մասում «յուրաքանչյուր պալատի» բառերից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ յուրաքանչյուր դատական կազմի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «երկու» բառը փոխարինել « ~~երեք~~ չորս» բառով.

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Վճռաբեկ դատարանում գործում են՝

1) քրեական պալատը՝ ~~8~~ 6 դատավորի թվակազմով.

2) քաղաքացիական պալատը՝ 7 դատավորի թվակազմով.

3) վարչական պալատը՝ 5 դատավորի թվակազմով:»»

4) հակակոռուպցիոն պալատը՝ 10 դատավորի թվակազմով:»:

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը «նիստերը» բառից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ այն դատական կազմի նիստերը, որում ընդգրկված է պալատի նախագահը» բառերով:

Հոդված ~~2~~5. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն. «Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են նաեւ համապատասխան պալատի վերացման դեպքում:»:

Հոդված 6. Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.
«1.1. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բաշխվում են միայն կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորների միջև, իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բաշխվում են միայն հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների միջև:»:

Հոդված ~~3~~7. Օրենքի 95-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.
«**Հոդված 95. Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման մասին որոշումը**
1. Դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է ըստ քրեական, քաղաքացիական, վարչական եւ հակակոռուպցիոն մասնագիտացումների: Քաղաքացիական մասնագիտացման բաժնում ներառվում է նաեւ սնանկության մասնագիտացումը: Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ներառվում են կոռուպցիոն հանցագործությունների քննության եւ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները:
2. Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը, համապատասխան մասնագիտացման դատավորների առկա եւ կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը եւ այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտության: Համալրումը կարող է իրականացվել համալրման ենթակա տեղերի քանակով՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում կամ առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:
3. Եթե դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական եւ քաղաքացիական մասնագիտացման բաժնում չի գերազանցում հաջորդ երկու տարում թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը չորսով, իսկ վարչական եւ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններում՝ երկուսով, ապա Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին: Նշված քանակի մեջ չեն հաշվարկվում դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված այն անձինք, որոնք իրենց նշանակման առաջարկության վերաբերյալ հայտնել են անհամաձայնություն հղիության եւ ծննդաբերության, նորածնի որդեգրման կամ նորածնի խնամակալ նշանակվելու հետ կապված արձակուրդում գտնվելու պատճառով: Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման համար անհրաժեշտ թեկնածուների քանակի հաշվարկը կատարվում է հաջորդ երկու տարվա ընթացքում քրեական եւ քաղաքացիական մասնագիտացման բաժիններում համալրման համար անհրաժեշտ քանակը յոթական թեկնածուով, իսկ վարչական եւ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններում՝ երկու թեկնածուով գերազանցող քանակի հաշվարկով:
4. Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի տեղեկություններ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման

նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները եւ վայրը: Համալրումը համալրման ենթակա տեղերի քանակով իրականացվելու դեպքում հայտարարությամբ նշվում է համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների:»;

Հոդված 8. Օրենքի 98-րդ հոդվածի 5-րդ մասում «123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում» բառերը փոխարինել «123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետում» բառերով, իսկ «132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով» բառերը՝ «132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետով» բառերով:

Հոդված 9~~4~~. Օրենքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) գրավոր քննության հանրագումարային արդյունքներով անհրաժեշտ միավորները հավաքած հավակնորդների ցուցակից, իսկ եթե համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով՝ դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը համալրելու համար անհրաժեշտ թեկնածուների քանակը 50 տոկոսով, բայց ոչ պակաս, քան հինգով գերազանցող քանակի ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակից, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան քանակի հավակնորդ չի հավաքել անհրաժեշտ միավորները, եւ»;

Հոդված 10~~5~~. Օրենքի 109-րդ հոդվածի 3-4-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է հավակնորդների թվին: Եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս հավակնորդների թիվն անհրաժեշտ քանակին հավասար կամ շատ լինելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է համալրման համար անհրաժեշտ քանակին, իսկ քիչ լինելու դեպքում՝ հավակնորդների թվին:

4. Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ, որում ընդգրկվում են՝

1) անհրաժեշտ քանակին հավասար քանակի առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած հավակնորդները, եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով,

2) Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած հավակնորդները, եթե դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:»;

Հոդված 11. Օրենքի 112-րդ հոդվածի 1.2-րդ մասը «թեկնածուների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների թեկնածուների» բառերով:

Հոդված ~~6~~12. Օրենքի 115-րդ հոդվածի1-ին մասի 4-5-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) չորրորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին.

5) հինգերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին:»:

Հոդված ~~7~~13. Օրենքի 116-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «4» թիվը փոխարինել «5» թվով.

2) 5-րդ եւ 6-րդ մասերում «5» թիվը փոխարինել «4» թվով:

Հոդված ~~8~~14. Օրենքի 123-րդ հոդվածում՝

1) 1-3-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը, վերաքննիչ դատարանների առկա եւ կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը եւ այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության: Համալրումը կարող է իրականացվել համալրման ենթակա տեղերի քանակով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում կամ առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:

2. Եթե դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը համապատասխանաբար քրեական, քաղաքացիական եւ վարչական մասնագիտացման բաժիններում չի գերազանցում հաջորդ երկու տարում վերաքննիչ դատարանների թափուր պաշտոնների կանխատեսվող քանակը, ապա Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը համալրման ենթակա տեղերի քանակով համալրելու անհրաժեշտության մասին: Նշված քանակի մեջ չեն հաշվարկվում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկված այն անձինք, որոնք իրենց նշանակման առաջարկության վերաբերյալ հայտնել են անհամաձայնություն եւ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով չեն հանվել դատավորների թեկնածուների ցուցակից:

3. Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է

պարունակի դիմումներն ընդունելու ժամկետը, վայրը: Համալրումը համալրման ենթակա տեղերի քանակով իրականացվելու դեպքում հայտարարությամբ նշվում է համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների:»;

2) 4-5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել;

3) 6-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) այն անձը, որը

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն:».

4) 10-րդ մասում «անձը դիմումին կցում է» բառերը փոխարինել «անձինք դիմումին կցում են» բառերով, իսկ «փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «իսկ 3-րդ կետի «ա» ենթակետում նշված անձը նաև՝» բառերով:

Հոդված ~~9~~15. Օրենքի 124-րդ հոդվածում՝

1) 5-6-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է թեկնածուների թվին: Եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով, ապա յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկելիս թեկնածուների թիվն անհրաժեշտ քանակին հավասար կամ շատ լինելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամի ունեցած ձայների թիվը հավասար է համալրման համար անհրաժեշտ քանակին, իսկ քիչ լինելու դեպքում՝ թեկնածուների թվին:

6. Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կազմում է առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակ, որում ընդգրկվում են՝

1) անհրաժեշտ քանակին հավասար քանակի առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած թեկնածուները, եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով,

2) Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած թեկնածուները, եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է առանց համալրման ենթակա տեղերի քանակի սահմանափակման:».

2) 10-րդ մասում՝

ա. հանել «մինչեւ օգոստոսի 1-ը, իսկ» բառերը,

բ. «բաժինն արտահերթ» բառերը փոխարինել «բաժինը» բառով;

Հոդված 16. Օրենքի 132-րդ հոդվածում

1) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) այն անձը, որը

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն:».

2) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություններ.

«Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր նշանակվելու համար սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նշված անձն իրավունք ունի ընդգրկվել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում, եթե հանդիսանում է քրեական մասնագիտացման կամ հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման դատավոր: Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավոր նշանակվելու համար սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նշված անձն իրավունք ունի ընդգրկվել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում, եթե հանդիսանում է քաղաքացիական մասնագիտացման դատավոր կամ հակակոռուպցիոն դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման դատավոր:».

3)6-րդ մասում «անձը դիմումից կցում է» բառերը փոխարինել «անձինք դիմումին կցում են» բառերով, իսկ «փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «իսկ 3-րդ կետի «ա» ենթակետում նշված անձը նաև՝» բառերով:

Հոդված ~~10~~17. Օրենքի 149-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3.1-ին կետից հանել «հերթական եւ արտահերթ» բառերը,

2) 3-րդ մասից հանել «հերթական» բառը:

Հոդված ~~11~~18. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 8-րդ մասում սահմանված պահից~~:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտության եւ իրականացման կարգի մանրամասները՝ հաշվի առնելով սույն հոդվածի կարգավորումները:

3. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի (այսուհետ՝ Քաղաքացիական և վարչական պալատ) այն դատավորները, որոնք մինչեւ Վճռաբեկ դատարանում պաշտոնավարելը պաշտոնավարել են վարչական կամ վարչական վերաքննիչ դատարաններում, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհրդին գրավոր համաձայնություն ներկայացնելու դեպքում շարունակում են պաշտոնավարել Վճռաբեկ դատարանի վարչական պալատում (այսուհետ՝ Վարչական պալատ) այդ պալատի ~~ստեղծված համարվելուց~~ գործելուց հետո: ~~Գրավոր համաձայնություն ներկայացրած դատավորները մինչեւ Վարչական պալատի ստեղծված համարվելը պաշտոնավարում են որպես Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներ:~~ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝

Քրեական պալատ) դատավորները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհրդին կարող են ներկայացնել գրավոր համաձայնություն Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն պալատ) կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմում իրենց պաշտոնավարումը շարունակելու համար: Բարձրագույն դատական խորհուրդը համաձայնությունները ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում նշված դատավորներից կարող է ընտրել երկու դատավոր Հակակոռուպցիոն պալատում իրենց պաշտոնավորումը շարունակելու համար: Սույն մասով նախատեսված՝ գրավոր համաձայնություն ներկայացրած Քաղաքացիական և վարչական պալատի դատավորները մինչեւ Վարչական պալատի գործելը պաշտոնավարում են որպես Քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներ: Սույն մասով նախատեսված՝ Քրեական պալատի՝ գրավոր համաձայնություն ներկայացրած և Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված դատավորները մինչև Հակակոռուպցիոն պալատի գործելը պաշտոնավորում են որպես Քրեական պալատի դատավորներ:

4. ~~Վճռաբեկ դատարանի բ~~Քաղաքացիական եւ վարչական պալատի այն դատավորները, որոնք չեն համապատասխանում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներին եւ այն դատավորները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներին, սակայն Վարչական պալատում պաշտոնավարելու վերաբերյալ գրավոր համաձայնություն չեն ներկայացնում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի (այսուհետ՝ Քաղաքացիական պալատ) եւ Վարչական պալատի ~~ստեղծված համարվելուց~~ գործելուց հետո շարունակում են պաշտոնավարել որպես Քաղաքացիական պալատի դատավորներ մինչեւ իրենց լիազորությունների ~~համար սահմանված ժամկետի~~ ավարտը՝ անկախ սույն օրենքի ~~1-ին~~3-րդ հոդվածով սահմանված թվակազմից: Հակակոռուպցիոն պալատում պաշտոնավորումը շարունակելու համար գրավոր համաձայնություն չներկայացրած, ինչպես նաև Հակակոռուպցիոն պալատում պաշտոնավորումը շարունակելու համար գրավոր համաձայնություն ներկայացրած, սակայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից չընտրված Քրեական պալատի դատավորները, շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ավարտը՝ անկախ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված թվակազմից:

5. ~~Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցը լուծելու պահից եռօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հրապարակում է հայտարարություն Վճռաբեկ դատարանում ստեղծվող Վարչական պալատում համալրման ենթակա տեղերի քանակի եւ համալրման կարգի վերաբերյալ:~~ Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերը լուծելու պահից՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հրապարակում է հայտարարություն համապատասխանաբար Վարչական և Հակակոռուպցիոն պալատներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Քաղաքացիական պալատում համալրման ենթակա տեղերի քանակի եւ համալրման կարգի վերաբերյալ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հայտարարությունը հրապարակելու պահից երկշաբաթյա ժամկետում Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձինք կարող են դիմում ներկայացնել Բարձրագույն դատական խորհուրդ՝ Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու նպատակով:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման նախապատրաստումը, ցուցակի կազմումը, հաստատումը եւ թեկնածուներին առաջարկության ներկայացումն

իրականացվում է Օրենքի 132-րդ եւ 133-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

8. ~~Վճռաբեկ դատարանի բ~~Քաղաքացիական եւ վարչական պալատը համարվում է վերացված, իսկ Քաղաքացիական եւ Վարչական պալատները ~~համարվում են ստեղծված~~ գործում են Վարչական պալատում դատավորների բոլոր թափուր պաշտոնները համալրելու պահից եւ եթե Քաղաքացիական պալատում պաշտոնավարելու է առնվազն 5 դատավոր: ~~Առաջխաղացման կարգով Քաղաքացիական կամ Վարչական պալատի դատավոր նշանակված դատավորները մինչեւ պալատների ստեղծված համարվելը շարունակում են պաշտոնավարել իրենց գործող պաշտոնում եւ համապատասխանաբար Քաղաքացիական կամ Վարչական պալատի դատավորի պաշտոնը ստանձնում են պալատների ստեղծված համարվելու պահից:~~ Հակակոռուպցիոն պալատը գործում է պալատի լուրաքանչյուր դատական կազմի դատավորների առնվազն 3 թափուր պաշտոնները համալրելու պահից: Առաջխաղացման կարգով Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատի դատավոր նշանակված անձինք համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատի դատավորի պաշտոնը ստանձնում են պալատների գործելու պահից:

9. ~~Քաղաքացիական եւ Վարչական պալատների ստեղծված համարվելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 134-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է պալատների նախագահների նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը:~~ Սույն հոդվածի 8-րդ մասին համապատասխան Քաղաքացիական և վարչական պալատի վերացված համարվելու պահից պալատի նախագահի լիազորությունները դադարում են: Համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական եւ Հակակոռուպցիոն պալատների գործելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 134-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է համապատասխան պալատի նախագահի նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը:

10. Մինչեւ Քաղաքացիական եւ Վարչական պալատների ~~ստեղծված համարվելը~~ գործելը շարունակում է գործել Քաղաքացիական եւ վարչական պալատը և վճռաբեկության կարգով քաղաքացիական եւ վարչական գործերի քննությունն իրականացվում է ~~Վճռաբեկ դատարանի բ~~Քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից: Մինչեւ Հակակոռուպցիոն պալատի գործելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից, եթե Քաղաքացիական պալատը դեռևս չի գործում, իսկ Քաղաքացիական պալատի գործելուց հետո՝ Քաղաքացիական պալատի կողմից: Մինչեւ Հակակոռուպցիոն պալատի գործելը կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Քրեական պալատի կողմից:

11. ~~Մինչեւ Քաղաքացիական եւ Վարչական պալատների ստեղծված համարվելը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից վարույթ ընդունված բողոքները Քաղաքացիական եւ Վարչական պալատների ստեղծված համարվելու պահից մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների միջեւ:~~ Մինչեւ Քաղաքացիական, Վարչական եւ Հակակոռուպցիոն պալատների գործելը Քաղաքացիական եւ վարչական պալատի և Քրեական պալատի կողմից վարույթ ընդունված բողոքները համապատասխան —պալատների գործելու պահից մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի պալատների միջև՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 10-րդ մասի կարգավորումները:

12. ~~Մինչեւ Քաղաքացիական եւ Վարչական պալատների ստեղծված համարվելը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատ ներկայացված վճռաբեկ բողոքները, որոնց վերաբերյալ չի կայացվել վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու, վերադարձնելու, վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում եւ որոնք չեն համապատասխանում տվյալ պալատի մասնագիտացմանը, մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների միջեւ:~~ Մինչեւ համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատների գործելը ներկայացված վճռաբեկ բողոքները, որոնց վերաբերյալ չի կայացվել վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու, վերադարձնելու, վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում եւ որոնք չեն համապատասխանում տվյալ պալատի կողմից քննության ենթակա գործերի շրջանակին, մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների միջեւ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ (Կ-092-15.11.2021-ՊԻ-011/1) , «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-092[1]-15.11.2021-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-092[2]-15.11.2021-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերնագիր	«ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական	Հոդվածների համարակալումը փոխել՝ լրացվող հոդվածներին համապատասխան:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի հոդվածներ			
3.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին հոդվածով. «***Հոդված 1.*** 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում՝ ~~4)~~7) 4-րդ մասում «պալատի» բառից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ համապատասխան դատական կազմի» բառերով. ~~5)~~8) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Կոլեգիալ կազմով որոշումներն ընդունվում են դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Վճռաբեկ դատարանում որոշումներն ընդունվում են Վճռաբեկ դատարանի պալատի, իսկ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ համապատասխան դատական կազմի դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»: ~~6)~~9) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով. «7. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում գործում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմեր՝ յուրաքանչյուրը 5 դատավորի թվակազմով, որոնք բողոքը քննելիս և որոշումներ ընդունելիս գործում են որպես Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:»:		
4.	***<< կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդվածով. «***Հոդված 2.*** Օրենքի 19-րդ հոդվածի 9-րդ մասում «յուրաքանչուր պալատի» բառերից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ յուրաքանչյուր դատական կազմի» բառերով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

5.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 1-ին հոդված, հոդվածի 1-ին և 2-րդ կետեր	«Երեք» բառը փոխարինել «չորս» բառով, «8» թիվը փոխարինել «6» թվով, լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ. «4) հակակոռուպցիոն պալատը՝ 10 դատավորի թվակազմով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ հոդվածով. «***Հոդված 4.*** Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը «նիստերը» բառից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ այն դատական կազմի նիստերը, որում ընդգրկված է պալատի նախագահը» բառերով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ հոդվածով. «***Հոդված 6.*** Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով. «1.1. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բաշխվում են միայն կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորների միջև, իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բաշխվում են միայն հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների միջև:»:		
8.	*<< կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 7-րդ և 14-րդ**	«համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով« բառերից հետո լրացնել «նաև» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդվածներ			
9.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ հոդված. «**Հոդված 8.** Օրենքի 98-րդ հոդվածի 5-րդ մասում «123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում» բառերը փոխարինել «123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետում բառերով, իսկ «132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով» բառերը՝ «132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետով բառերով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ հոդվածով. «***Հոդված 11.*** Օրենքի 112-րդ հոդվածի 1.2-րդ մասը «թեկնածուների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների թեկնածուների» բառերով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ կետերով. «3) 6-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) այն անձը, որը ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական	Ընդունվել է:	Ընդունվել է:

		լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 8-րդ հոդված	աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ բ) ունի վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն:». 4) 10-րդ մասում «անձը դիմումին կցում է» բառերը փոխարինել «անձինք դիմումին կցում են» բառերով, իսկ «փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «իսկ 3-րդ կետի «ա» ենթակետում նշված անձը նաև՝» բառերով:».		
12.	*<< կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ հոդվածով. «***Հոդված 16.*** Օրենքի 132-րդ հոդվածում ~~1)~~2) 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) այն անձը, որը ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			աստիճան և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ բ) ունի վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն:». 2) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություններ. «Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր նշանակվելու համար սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նշված անձն իրավունք ունի ընդգրկվել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում, եթե հանդիսանում է քրեական մասնագիտացման կամ հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման դատավոր: Վճռաբեկ դատարանում		

			հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավոր նշանակվելու համար սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նշված անձն իրավունք ունի ընդգրկվել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում, եթե հանդիսանում է քաղաքացիական մասնագիտացման դատավոր կամ հակակոռուպցիոն դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման դատավոր:». 3)6-րդ մասում «անձը դիմումից կցում է» բառերը փոխարինել «անձինք դիմումին կցում են» բառերով, իսկ «փաստաթղթերը,» բառից հետո լրացնել «իսկ 3-րդ կետի «ա» ենթակետում նշված անձը նաև՝» բառերով:»		
13.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում**	Հանել «, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 8-րդ մասում սահմանված պահից» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մաս			
14.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասեր**	«Ստեղծված համարվել» բառը փոխարինել «գործել» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մաս**	1. «Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի» բառերից հետո լրացնել «պալատի (այսուհետ՝ Քաղաքացիական և վարչական պալատ)» բառերով: 2. «Գրավոր համաձայնություն ներկայացրած դատավորները մինչեւ Վարչական պալատի ստեղծված համարվելը պաշտոնավարում են որպես	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներ:» բառերը փոխարինել «Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Քրեական պալատ) դատավորները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում Բարձրագույն դատական խորհրդին կարող են ներկայացնել գրավոր համաձայնություն Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն պալատ) կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմում իրենց պաշտոնավարումը շարունակելու համար: Բարձրագույն դատական խորհուրդը համաձայնությունները ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում նշված դատավորներից կարող է ընտրել երկու դատավոր Հակակոռուպցիոն պալատում իրենց պաշտոնավորումը շարունակելու համար: Սույն մասով նախատեսված՝ գրավոր համաձայնություն ներկայացրած		

			Քաղաքացիական և վարչական պալատի դատավորները մինչեւ Վարչական պալատի գործելը պաշտոնավարում են որպես Քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներ: Սույն մասով նախատեսված՝ Քրեական պալատի՝ գրավոր համաձայնություն ներկայացրած և Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրված դատավորները մինչև Հակակոռուպցիոն պալատի գործելը պաշտոնավորում են որպես Քրեական պալատի դատավորներ:» բառերով:		
16.	*<< կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մաս**	1. «Վճռաբեկ դատարանի քաղաքացիական» բառերը փոխարինել «Քաղաքացիական» բառով, «1-ին» բառը «3-րդ» աբբռով: 2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով. «Հակակոռուպցիոն պալատում պաշտոնավորումը շարունակելու համար գրավոր համաձայնություն չներկայացրած, ինչպես նաև Հակակոռուպցիոն պալատում պաշտոնավորումը շարունակելու համար	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գրավոր համաձայնություն ներկայացրած, սակայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից չընտրված Քրեական պալատի դատավորները, շարունակում են պաշտոնավարել մինչեւ իրենց լիազորությունների ավարտը՝ անկախ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված թվակազմից:»:		
17.	*<< կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մաս**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հարցերը լուծելու պահից՝ մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հրապարակում է հայտարարություն համապատասխանաբար Վարչական և Հակակոռուպցիոն պալատներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Քաղաքացիական պալատում համալրման ենթակա տեղերի քանակի եւ համալրման կարգի վերաբերյալ:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
18.	<<	**«Հայաստանի Հանրապետության**	«Առաջխաղացման կարգով Քաղաքացիական կամ	Ընդունվել է:	Ընդունվել է:

	կառավարություն	դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 8-րդ մաս	Վարչական պալատի դատավոր նշանակված դատավորները մինչեւ պալատների ստեղծված համարվելը շարունակում են պաշտոնավարել իրենց գործող պաշտոնում եւ համապատասխանաբար Քաղաքացիական կամ Վարչական պալատի դատավորի պաշտոնը ստանձնում են պալատների ստեղծված համարվելու պահից:»: բառերը փոխարինել «Վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիոն պալատը գործում է պալատի յուրաքանչյուր դատական կազմի դատավորների առնվազն 3 թափուր պաշտոնները համալրելու պահից: Առաջխաղացման կարգով Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատի դատավոր նշանակված անձինք համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատի դատավորի պաշտոնը ստանձնում են պալատների գործելու պահից:»: բառերով:		
19.	<<	«Հայաստանի	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն	Ընդունվել է:	Ընդունվել է:

	կառավարություն	Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 9-րդ մաս	հոդվածի 8-րդ մասին համապատասխան Քաղաքացիական և վարչական պալատի վերացված համարվելու պահից պալատի նախագահի լիազորությունները դադարում են: Համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական եւ Հակակոռուպցիոն պալատների գործելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 134-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է համապատասխան պալատի նախագահի նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը:»:		
20.	<< *կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 10-րդ մաս	1. «ստեղծված համարվելը» բառերը փոխարինել «գործելը շարունակում է գործել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը և» բառերով, «Վճռաբեկ դատարանի քաղաքացիական» բառերը փոխարինել «Քաղաքացիական« բառով: 2. Լրացնել հետևյալ նախադասությամբ. «Մինչեւ Հակակոռուպցիոն պալատի գործելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից, եթե Քաղաքացիական պալատը դեռևս չի գործում, իսկ Քաղաքացիական պալատի գործելուց հետո՝ Քաղաքացիական պալատի կողմից: Մինչեւ Հակակոռուպցիոն պալատի գործելը կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Քրեական պալատի կողմից:»:		
21.	<< *կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 11-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մինչեւ Քաղաքացիական, Վարչական եւ Հակակոռուպցիոն պալատների գործելը Քաղաքացիական եւ վարչական պալատի և Քրեական պալատի կողմից վարույթ ընդունված բողոքները համապատասխան պալատների գործելու պահից մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի պալատների միջև՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 10-րդ մասի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կարգավորումները:»:		
22.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 12-րդ մաս	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մինչեւ համապատասխանաբար Քաղաքացիական, Վարչական կամ Հակակոռուպցիոն պալատների գործելը ներկայացված վճռաբեկ բողոքները, որոնց վերաբերյալ չի կայացվել վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու, վերադարձնելու, վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում եւ որոնք չեն համապատասխանում տվյալ պալատի կողմից քննության ենթակա գործերի շրջանակին, մեկ շաբաթվա ընթացքում վերաբաշխվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատների միջեւ:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
23.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*Հոդված 2.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Մինչեւ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի գործելը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Վճռաբեկության կարգով վարչական գործերի քննությունն իրականացվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից:»:		
24.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	Լրացնել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
25.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«1-ին հոդվածի 1-ին մասից, 27-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերից հանել «եւ վարչական» բառերը» փոխարինել «(այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասում «վարչական պալատում» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն պալատներում» բառերով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
26.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*Հոդված 2.* Օրենսգրքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

		փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	**«Հոդված 26. Ընդդատության և ենթակայության մասին վեճերը** 1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը: 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: 3. Հակակոռուպցիոն դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում դատարանից		

			ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում հակակոռուպցիոն դատարանից ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: 4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: 5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների նախագահները, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝		

			Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և հակակոռուպցիոն պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը: 6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և համապատասխանաբար վարչական կամ հակակոռուպցիոն պալատների նախագահների մասնակցությամբ: Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք: Որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ձայների մեծամասնությամբ: Քվեարկելուց ձեռնպահ մնալ չի թույլատրվում: 7. Սույն հոդվածով սահմանված կարգով		

			որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:»:		
27.	*<< կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-5-րդ հոդվածներով. «***Հոդված 3.*** Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝ 1) 6-րդ մասում «եւ վարչական պալատի» բառերը փոխարինել «պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի» բառերով. 7) 7-րդ մասում «իսկ Վճռաբեկ դատարանում՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի» բառերը փոխարինել «Վճռաբեկ դատարանում՝ քաղաքացիական պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի»: ***Հոդված 4.*** Օրենսգրքի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			402-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն. «Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բողոքը քննելիս դատական նիստը վարում է տարիքով ավագ դատավորը, եթե պալատի նախագահն ընդգրկված չէ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմում:»: *Հոդված 5.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներում: 2. Սույն օրենքի 2-րդ հոդվածը դատարանների միջև ընդդատության, ինչպես նաև դատարանի և սնանկության դատարանների միջև ենթակայության մասին վեճերին վերաբերող կարգավորումների մասով ուժի մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի		

			նախագահի նշանակման պահից, դատարանի և վարչական դատարանի միջև ենթակայության մասին վեճերին վերաբերող կարգավորումների մասով՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների նախագահների նշանակման պահից, իսկ դատարանի և հակակոռուպցիոն դատարանի միջև ենթակայության մասին վեճերին վերաբերող կարգավորումների մասով՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և հակակոռուպցիոն պալատների նախագահների նշանակման պահից: 2. Մինչև սույն օրենքի 2-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության և ենթակայության մասին վեճերը ենթակա են լուծման Օրենսգրքի՝ մինչև սույն օրենքի 2-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը գործող դրույթներին համապատասխան: 3. Մինչեւ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի գործելը վճռաբեկության կարգով քաղաքացիական		

			գործերի քննությունն իրականացվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից: Մինչեւ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի գործելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից, եթե Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը դեռևս չի գործում, իսկ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի գործելուց հետո՝ քաղաքացիական պալատը:»:		
28.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծերի փաթեթ**	Փաթեթում լրացնել նոր նախագիծ. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» Օ ՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈ Ւ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«6. Ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:»: **Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի նշանակման պահից: 2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Վճռաբեկ դատարանում		

			ստացված ենթակայության մասին վեճերը ենթակա են լուծման «Սնանկության մասին» օրենքի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող դրույթներին համապատասխան:		
29.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծերի փաթեթ**	Փաթեթում լրացնել նոր նախագիծ. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 39-րդ հոդվածի 5-րդ մասում՝ 1) առաջին նախադասությունում «քրեական պալատի» բառերից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի» բառերով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			2) երկրորդ և երրորդ նախադասություններում «քրեական պալատի դատավորների» բառերը փոխարինել «քրեական պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորների ընդհանուր թվի» բառերով: *Հոդված 2.* Օրենսգրքի 46-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատին ընդդատյա են կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը, որոնք քննում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը:»: *Հոդված 3.* Օրենսգրքի		

			51-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 51. Ընդդատության մասին վեճերը** 1. Գործն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում այն Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա ընդդատությանը: 2. Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա ընդդատությանը: 3. Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացնում առաջին ատյանի դատարանից ստացած գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա ընդդատությանը: Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում		

			հակակոռուպցիոն դատարանից ստացած գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա ընդդատությանը: 4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը: 5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քրեական և վարչական պալատների նախագահները, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում են գործի ընդդատությունը: 4. Սույն հոդվածի 2-րդ		

			և 3-րդ մասերով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի քրեական և համապատասխանաբար վարչական կամ հակակոռուպցիոն պալատների նախագահների մասնակցությամբ: Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք: Որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ձայների մեծամասնությամբ: Քվեարկելուց ձեռնպահ մնալ չի թույլատրվում: 5. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:»: **Հոդված 4.** Օրենսգրքի 405-րդ հոդվածը «քրեական պալատը» բառից հետո լրացնել «իսկ կոռուպցիոն հանցագործությունների գործերով՝ հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների		

			քննության դատական կազմը» բառերով: *Հոդված 5.* Օրենսգրքի 418-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում բողոքը քննելիս դատական նիստը վարում է տարիքով ավագ դատավորը, եթե պալատի նախագահն ընդգրկված չէ կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմում:»: *Հոդված 6.* Օրենսգրքի 499[15]-րդ հոդվածի 2-րդ մասում «պալատի» բառը փոխարինել «կամ հակակառուպցիոն պալատի» բառերով: *Հոդված 7.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է		

			մտնում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներում: 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածը առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումների մասով ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, առաջին ատյանի և վարչական դատարանների միջև ընդդատության վեճերին վերաբերող կարգավորումների մասով ուժի մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահի նշանակման պահից, իսկ առաջին ատյանի և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումների մասով՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահի նշանակման պահից: 3. Մինչև սույն օրենքի 3-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության մասին վեճերը ենթակա են լուծման		

			Օրենսգրքի՝ մինչև սույն օրենքի 3-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը գործող դրույթներին համապատասխան: 4. Մինչեւ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի գործելը կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերի քննությունն իրականացվում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից:		
30.	*<< կառավարություն*	**Հիմնավորում**	Լրամշակել հիմնավորումը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
31.	*«Հայաստան» խմբակցություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ**	1. Հանել 2-րդ հոդվածը: 2. Նախագծի 11-րդ հոդվածը լրացնել նոր՝ 13-րդ մասով. «13. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահը Քաղաքացիական և Վարչական պալատների ձևավորումից հետո շարունակում են	Չի ընդունվել: - Նախագծերով նախատեսվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի վերացում և երկու նոր՝ Քաղաքացիական և Վարչական պալատների ստեղծում: Ըստ այդ, քանի որ գործ ունենք նոր պալատների հետ, ապա այդ նոր պալատների կազմից պետք է ընտրվեն նոր նախագահներ՝ հնարավորություն	Չի ընդունվել:

			պաշտոնավարել որպես այն պալատի նախագահ, որը վերջինս գրավոր կերպով նշում է Բարձրագույն դատական խորհրդին ուղարկվելիք ծանուցագրում»:	ընձեռելով նոր պալատի դատավորներին հավասար մասնակցելու նախագահի ընտրությանը: - Քաղաքացիական և վարչական պալատի գործող նախագահը զրկված չէ նոր ստեղծվող Քաղաքացիական կամ Վարչական պալատների նախագահ նշանակվելու հնարավորությունից, քանի որ ոչ գործող օրենդրությամբ, ոչ էլ նախագծերի փաթեթով չի նախատեսվում որևէ կարգավորում, որը կարող է խոչընդոտել նրա՝ պալատներից որևէ մեկի նախագահի պաշտոնում նշանակվելուն: Այս հանգամանքը բացառում է Բական ընդդեմ Հունգարիայի գործով ՄԻԵԴ-ի իրավամեկնաբանությունների կիրառումն այս դեպքի նկատմամբ, քանի որ նշված գործով նախագծով նախատեսվել են դատարանի նախագահին ներկայացվող այնպիսի նոր պահանջներ, որոնք բացառելու էին գործող նախագահի՝ նորից նախագահ նշանակվելու հնարավությունը: - Դատական օրենսգրքի 35-րդ հոդվածում արդեն իսկ	

				նախատեսված է համանման կարագավորում, ըստ որի՝ Դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունները դադարում են դատարանի վերացման դեպքում:	
32.	*«Հայաստան» խմբակցություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդված**	1. Հոդվածի 1-ին մասում «օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված պահից:» նախադասությունը փոխարինել «սույն հոդվածով սահմանված դեպքերի:» նախադասությամբ: 2. Լրացնել նոր՝ 14-րդ մասով՝ «14. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում օրենքի 1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 8-րդ մասում սահմանված պահից»:	Չի ընդունվել: Հայտնում ենք, որ անցումային դրույթներում կատարվել են փոփոխություններ, և սահմանվել է, որ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, Քաղաքացիական և վարչական պալատը համարվելու է վերացված, իսկ Քաղաքացիական եւ Վարչական պալատները գործելու են Վարչական պալատում դատավորների բոլոր թափուր պաշտոնները համալրելու պահից եւ եթե Քաղաքացիական պալատում պաշտոնավարելու է առնվազն 5 դատավոր, իսկ Հակակոռուպցիոն պալատը գործելու է պալատի յուրաքանչյուր դատական կազմի դատավորների առնվազն 3 թափուր պաշտոնները համալրելու պահից:	Չի ընդունվել:

33.	*«Հայաստան» խմբակցություն*	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 11-րդ հոդված**	Լրացնել նոր՝ 15-րդ մասով. «15. Սույն օրենքի 6-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 1-ից:»:	Չի ընդունվել: Նշված կարգավորումների՝ նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետից տարբերվող այլ ժամկետ նախատեսելու անհրաժեշտությունը կարծում ենք՝ բացակայում է, իսկ առաջարկում այս մասով որևէ հիմնավորում չի ներկայացվել:	Չի ընդունվել:

Page 15: [1] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:54:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [2] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:54:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [3] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:54:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [4] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:55:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [5] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:54:00 PM

Font: (Default) Arial Unicode, 12 pt, Font color: Auto, Russian (Russia), Pattern: Clear

Page 15: [6] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:55:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [7] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:55:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [8] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:55:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [9] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 1:55:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [10] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [11] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 4:04:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [12] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [13] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [14] Formatted	K-Aleksanyan	2/3/2022 4:04:00 PM

Font: Arial Unicode, Afrikaans (South Africa)

Page 15: [15] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [16] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [17] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [18] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)

Page 15: [19] Formatted	K-Aleksanyan	2/2/2022 5:58:00 PM

Font: Arial Unicode, Font color: Auto, Afrikaans (South Africa)